МЕЖДУНАРОДНАЯ АССОЦИАЦИЯ
ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА, ПОЛИТИКИ
И ГУМАНИТАРНЫМ ПРОБЛЕМАМ
МЕЖДУНАРОДНАЯ НЕПРАВИТЕЛЬСТВЕННАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ЖИЗНЬ LIFE ԿՅԱՆՔ

INTERNATIONAL ASSOCIATION
OF HUMAN RIGHTS, POLITICS
AND HUMAN PROBLEMS
INTERNATIONAL NON-GOVERNMENTAL
ORGANIZATION

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

No 17/10 24 10 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Վարչապետ,

ՀՀ փաստաբանների պալատի կողմից վերջին օրերին դժգոհությունների ալիք է բարձրացվել ՀՀ արդարատադության նախարարության նախապատրաստած և ՀՀ կառավարություն ներկայացրած «Պետական տուրքի մասին» և «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի կապակցությամբ:

Համաձայն օրենքի նախագծի յուրաքանչյուր փաստաբան ամսեկան 5000 դրամ անդամավճարից, եկամտահարկից, ու շրջանառության հարկ վճարելուց բացի, պարտավոր է պետական բյուջե վճարել ևս տարեկան 60.000 դրամ՝ հանրային պաշտպաններին աշխատավարձ վճարելու համար:

Որպես իրավապաշտպան կազմակերպություն մենք նույնպես մեր մտահոգությունն ենք հայտնում նախագծի կապակցությամբ, քանի որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի դրույթների պահանջներին:

Այսպես, համաձայն ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների, յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում «Պետական միջոցների հաշվին»:

5 apt., 10/1 Chechov St., 375100 Yerevan, RA • ՀՀ, Երևան 375100, Չեխովի փող. 10/1, բն. 5 • РА, Ереван 375100, ул. Чехова 10/1, кв. 5
Tel.: (374 93) 888 780, (374 96) 888 769, (374 10) 42 11 03 E-mail: manev2010@mail.ru

Մինչդեռ, համաձայն նախագծի, պետությանը վերապահված այդ լիազորությունը, առանց որևէ հիմնավոր պատճառաբանության, պետության վրայից վերցվում և այն դրվում է փաստաբանների վրա:

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետության կողմից քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու սկզբունքը հանդիսանում է միջազգային իրավունքի հիմնարար և կարևորագույն սկզբունքներից մեկը:

Այսպես, համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 04.11.1950թ. ընդունված եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջների, քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի պաշտպանելու իրեն անձամբ, կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով , կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, իրավունք ունի ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա են պահանջում արդարադատության շահերը, ինչը ենթադրում է, որ անվճար նշանակված դատապաշտպանի ծախսերը պետք է կատարվի տվյալ պետության պետական միջոցների հաշվին, այլ ոչ թե որևէ այլ կազմակերպության, առավելևս հասարակական կազմակերպության միջոցների հաշվին:

Բացի նշվածներից, ՀՀ օրենսդրությամբ որևէ այլ իրավական ակտով չի սահմանված, որ անվճար իրավաբանական ծառայության ծախսերը պետք է կատարվեն փաստաբանների միջոցների հաշվին:

Փաստաբանների վրա նման պարտավորություններ դնելն արդարացված և նպատակահարմար չէ նաև այն առումով, որ նրանցից շատերն առանց այն էլ մեծ դժվարությամբ են վճարում անգամ ամսեկան 5000 անդամավճարը, եկամտահարկը և շրջանառության հարկը, ուր մնաց վճարեն տարեկան ևս 60.000 դրամ:

Նախագիծը հակասում է նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին:

Համաձայն նշված հոդվածի պահանջների՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները պետական տուրք վճարում են պետության կողմից որոշակի ծառայություններ մատուցելու դիմաց, մինչդեռ, տվյալ պարագայում, պետությունը

փաստաբաններին որևէ ծառայություն չի մատուցում, որի համար վերջիններս պարտավորված լինեն վճարել պահանջվող գումարը, հետևաբար, անհասկանալի է մնում՝ թե փաստաբաններն ինչ հիմքերով և ինչի համար պետք է վճարեն այդ գումարը, մանավանդ դա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածի պահանջների համաձայն անվճար իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին, այսինքն՝ պետական բյուջեյից:

Նշված օրենքի ընդունմամբ և փաստաբանների վրա նման պարտավորություն դնելը կհանգեցնի փաստաբանական ծառայության համար վճարումների կտրուկ բարձրացմանը, որի արդյունքում էլ կտուժեն ՀՀ քաղաքացիները և հատկապես սոցիալապես անապահով խավը, որոնց համար փաստաբանի ծառայությունից օգտվելը կդառնա գրեթե անհասանելի:

Բացի նշվածներից, անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ շատ փաստաբաններ քաղաքացիներին ցուցաբերում են անվճար իրավաբանական օգնություն՝ ելնելով վերջիններիս անվճարունակ լինելու հանգամանքից:

Ելնելով վերոգրյալներից, կազմակերպության խորհրդի անունից խնդրում եմ՝ ցուցաբերել շրջահայացություն և նախագիծը հանել շրջանառությունից՝ ավելորդ դժգոհություններից ու լարվածությունից զերծ մնալու համար:

Խորին երախտագիտությամբ և հարգանքով
Նախագահ, ի.գ.դոկտոր, պրոֆեսոր
Գեներալ լեյտենանտ, ՀՀ Ազգային հերոս
ՀԽ հանձնաժողովի անդամ

Է. Ս. Մանասիդիս